ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Կենտրոն,Սահմանադրության հրապարակ 1
Հեռ. (0223)2-23-45 հեռ. /ֆաքս (060) 460145
09 օգոստոս 2017 թ. N 787

«ՌԵԴ ՖՕՕԴ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ
Ք. ԵՐԵՎԱՆ, ՇԱՐՈՒՐԻ ՓՈՂ. 16/34

Հարգելի պարոն Գևորգյան

Հրազդանի համայնքապետարանի և «ՌԵԴ ՖՕՕԴ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Մատակարար) միջև «27» «02» 2017 թվականին կնքված «ԿՄՀՔ-ՇՀԱՊՁԲ-15/2-06/17» ծածկագրով «Սննդամթերքի» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն պարտավորվում է սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված «ՍՆՆԴԱՄԹԵՐՔ» /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

Համաձայն Պայմանագրի 2.1 կետի Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

Համաձայն 2.2 կետի Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով, պայմանով, որ յուրաքանչյուր աշխատանքային օր մինչև ժամը 8:30-09:00 բոպե, «Թիվ 7 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ում մատակարարված լինի ապրանքը:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ Ընկերության կողմից խախտվել են Պայմանագրի վերոնշյալ կետերը, ուստի Պատվիրատուն՝ Հրազդանի համայնքապետարանը, միակողմանի լուծում է Պայմանագիրը՝ 1.04.2017 թվականից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Կատ.՝ համայնքի ղեկավարի
տեղակալ Գ.Տիգրանյան
Հեռ.(060) 460170